ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հունիս 2025թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հունիսին գումարվել է Պալատի խորհրդի 3 նիստ՝ 02.06.2025թ.-ին , 13.06.2025թ.-ին և 30.06.2025թ.-ին:

02.06.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 2 հարց՝ Պալատի խորհրդի նախագահի և նախագահի տեղակալի ընտրություն: Քննարկման արդյունքում Պալատի խորհրդի նախագահ ընտրվեց Մանվել Սևանի Ղազարյանը, իսկ Պալատի խորհրդի նախագահի տեղակալ՝ Արթուր Սարոյի Հարությունյանը:

13.06.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց:Նիստի ընթացքում հաստատվել են Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում տալու, Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ նշանակելու և Հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու, Պալատի անդամակցության հանձնաժողովի նախագահ նշանակելու և Հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումները:

30.06.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 3 հարց: Նիստի ընթացքում հաստատվել են Պալատի փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու և Պալատի հանձնաժողովների կանոնադրությունների փոփոխությունների մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 25.06.2025թ.-ին, որում փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 4(չորս) անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 27.06.2025թ.-ին, որում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու ընդհանուր թվով 13 (տասներեք) ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

05.06.2025թ.-ին տեղի է ունեցել «Աշխատանքային պայմանագրի կնքումը էլեկտրոնային թվային համակարգով, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ժորա Սարգսյանը:**



11.06.2025թ.-ին տեղի է ունեցել «Շահութահարկ» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Գոհար Օհանյանը:**



18.06.2025թ.-ին տեղի է ունեցել«Ապագայի հաշվետվություններ՝ ո՞ր ցուցանիշներն են իրականում օգնում արդյունավետ կառավարել ֆինանսները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը:**



23.06.2025թ.-ին տեղի է ունեցել «Ռիսկերի գնահատում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Էմիլ Վասիլյանը:**



24.06.2025թ.-ին տեղի է ունեցել «Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ասանեթ Ալոյանը:**



26.06.2025թ.-ին տեղի է ունեցել «ՖՀՄՍ 9 – Ֆինանսական ակտիվների դասակարգումները, վերադասակարգումները և վերափոխումները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ավետիք Մովսիսյանը:**